

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գարիկ Գաբրիելի Գաբրիելյան

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԵՎ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ
ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն 2 0 1 4

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի «Գլաժոր» համալսարանում

Գիտական ղեկավար՝

**տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Խորեն Ալբերտի Մխիթարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Բորիսի Սալմազարյան**

**տնտեսագիտության թեկնածու
Վահագն Արմենի Գրիգորյան**

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թվականի դեկտեմբերի 18-ին, ժամը 14⁰⁰ -
ին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի
տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք.Երևան, Մ. Նալբանդյան փող., 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագի-
տական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թվականի նոյեմբերի 18-ին:

**014 մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, տնտեսագիտության
դոկտոր, պրոֆեսոր**



Ս.Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում արտահայտվեց 2009թ. սկզբից: Ճգնաժամի սկզբնական փուլում գների և ֆինանսական կայունության խնդիրների արդյունավետ համադրման շնորհիվ հաջողվեց համրապետության ֆինանսական հատվածում պահպանել որոշակի կայունություն և խուսափել բանկային համակարգում լուրջ ցնցումներից:

Տնտեսական համակարգի զարգացման արդյունավետ կառուցվածքային տեղաշարժերի խթանման գործում չափազանց մեծ է ներդրումային գործունեության դերն ու նշանակությունը: Վերջինիս կարևորությունը հատկապես մեծանում է շուկայական հարաբերությունների փուլում՝ պայմանավորված տնտեսական առաջընթացի սպառնալից նպատակով տնտեսական վերափոխումների իրականացման գործընթացում մեծածավալ ֆինանսական միջոցների առկայության պահանջով:

Միջազգային փորձը վկայում է, որ շուկայական տնտեսության մեխանիզմի արդյունավետ գործունեությունն անհնար է առանց կայացած ֆինանսական համակարգի և դրա կարևոր հատվածը հանդիսացող բանկային համակարգի արդյունավետ գործունեության: Դա է պատճառը, որ տնտեսական զարգացման ներկա փուլում մեծ կարևորություն են ստացել և հրատապ լուծում են պահանջում տնտեսության առաջընթացի վրա բանկային համակարգի ներդրումային գործունեության ազդեցության մեխանիզմների կատարելագործման խնդիրները:

Բանկային համակարգն իր բոլոր գործառույթներով հանդերձ իրականացնում է նաև ներդրումային գործընթացի սպասարկման և խթանման գործառույթ՝ իր հեթոքին հանդես գալով որպես երկրի ներդրումային շուկայի կարևոր սուբյեկտ: Ուստի երկրի ներդրումային քաղաքականությունն արդյունավետ իրականացնելու նպատակով առանձնակի ուշադրություն է պետք դարձնել բանկային համակարգի հուսալիության և կայունության ապահովման, ինչպես նաև ներդրումային գործունեության խթանման հետ կապված հիմնախնդիրների լուծմանը:

Այս առումով տնտեսական վերափոխումների արդյունավետությունը պահանջում է համապատասխան բայլերի իրականացում նաև բանկային համակարգում՝ ներդրումային գործընթացում առևտրային բանկերի արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով, առանց որի, ըստ էության, անհնար է ակնկալել ցանկալի արդյունքներ ընդհանուր տնտեսական զարգացման գործում:

Առևտրային բանկերի ներդրումային պորտֆելի արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը նկատելի է հատկապես ներկայումս, երբ աշխարհի ֆինանսական շուկաներում դեռևս շարունակվում են դրսևորվել հետճգնաժամային բացասական իրավիճակները, իսկ ՀՀ բանկային համակարգում շարունակվում է պահպանվել իրացվելիության բարձր մակարդակը:

Չնայած ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը որոշակի պատճառներով թույլ էր, այնուամենայնիվ, նրա բացասական դրսևորումները ՀՀ ներդրումային շուկայում կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել հանրապետության ֆինանսական համակարգի ամենակայացած հատվածի՝ բանկային համակարգի ներդրումային գործունեության կառավարման արդյունավետության բարձրացման, ներդրումային պորտֆելի կառուցվածքի բարելավման խնդիրներին:

Մյուս կողմից պայմանավորում է առևտրային բանկերի ներդրումային պորտֆելի կառավարման կատարելագործման անհրաժեշտությունը, ինչով էլ պայմանավորված է սույն ատենախոսության արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակը ՀՀ բանկային համակարգի ներդրումային պորտֆելի ձևավորման և կառավարման արդի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա տվյալ ոլորտի կառավարման գործընթացի կատարելագործման

հիմնարար ուղիների մշակումն է: Այդ նպատակի իրականացման համար տեսնախոսության հիմքում դրվել են հետևյալ խնդիրները.

- բանկային գործունեության տեսանթրոպական հիմքերի ուսումնասիրություն,
- առևտրային բանկերի՝ որպես ներդրումային գործունեության կարևոր սուբյեկտների վերլուծություն,

առևտրային բանկերի ներդրումային պորտֆելի ձևավորման ռազմավարության վերլուծություն և գնահատում,

ՀՀ առևտրային բանկերում ներդրումային պորտֆելի կառավարման նկատմամբ վերահսկողության գործընթացի կազմակերպման ուղիների մշակում,

ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական դրության վրա ազդող գործոնների բացահայտում և վերլուծություն,

Ներդրումային ռիսկերի կառավարման համապատասխան մեխանիզմների մշակում և կատարելագործում,

Բանկային համակարգի ներդրումային պորտֆելի կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությունների մշակում,

ՀՀ բանկային համակարգում ներդրումային պորտֆելի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկությունների մշակում:

Ուսումնասիրության առարկան և օբյեկտը: Ուսումնասիրության առարկան բանկային համակարգի ներդրումային պորտֆելի կառավարման առանձնահատկությունների ու բարելավման ուղղությունների համակողմանի վերլուծությունն ու գնահատումն է՝ ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ բանկային շուկայի մասնակիցներն են՝ հանձինս ՀՀ Կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և այլ ֆինանսավարկային հաստատությունների:

Առեմախոսության տեսականմթողաբանական հիմքը և տեղեկատվական ապահովումը: Հետազոտությունը կատարվել է կառավարման և ֆինանսների տեսության, ինչպես նաև բանկային գործունեությանը վերաբերող հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատությունների ուսումնասիրման և համակարգված վերլուծության հիման վրա: Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվել է հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականության աղբյուրներից, բանկային ներդրումային գործունեությունը կարգավորող ՀՀ օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից, ՀՀ ԿԲ-ի, ՀՀ ազգային վիճակագրության ծառայության պաշտոնական տեղեկագրերից, ԻՆՏԵՐՆԵՏ տեղեկատվական ցանցից:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, մաթեմատիկական և գրաֆիկական մի շարք մեթոդներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Առեմախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում:

1. ՀՀ առևտրային բանկերի ներդրումային ակտիվության բարձրացման և տնտեսության իրական հաստատում վարկային ներդրումների ռիսկայնության նվազեցման նպատակով հիմնավորվել է բանկերի ներդրումային պորտֆելի ձևավորման և կառավարման նոր ընթացակարգ բաղկացման այն բնութագրող հիմնական ցուցանիշների գնահատման 5 հաջորդական փուլերից:

2. ՀՀ առևտրային բանկերի կողմից ներդրումային պորտֆելի արդյունավետ կառավարման, ֆինանսական շուկայում ավելցուկային իրացվելիության հետևանքով շահութաբերության նվազումից և արտաքին ցնցումներից խուսափելու նպատակով բացահայտվել են այդ բնագավառում առաջընթացը խոչընդոտող գործոնները և մշակվել միջոցառումներ ու հանձնարարականներ դրանց հաղթահարման ուղղությամբ, մասնավորապես՝ հիմնավորվել է օպտիմալ վարկային փաթեթների մշակման և ըստ ոլորտային պատկանելիության ու ֆինանսական կայունության աստիճանի՝ հաճախորդի վարկունակու-

թյան զնահատման նոր մեթոդի կիրառման տնտեսական նպատակահարմարությունը:

3. ՀՀ առևտրային բանկերի վարկային ռազմավարության SWOT վերլուծության իրականացման արդյունքում վարկային ներդրումների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել են վարկային ներդրումների կառավարման թույլ կողմերի վերացման և սպառնալիքների ազդեցության նվազեցման մեթոդական և հայեցակարգային մոտեցումներ՝ ըստ տարածքային ստորաբաժանումների տարբեր վարկատեսակների տրամադրման սահմանաչափերի, հաճախորդների վարկունակության և ֆինանսական դրության զնահատման գործակիցների մշակման, ինչպես նաև ձեռնարկություններին վարկավորող բանկերին լրացուցիչ երաշխիքների տրամադրման համար երաշխիքային նոր հիմնադրամների ստեղծման տեսանկյունից:

4. Վճարունակության և իրացվելիության անհրաժեշտ մակարդակ ապահովելու, ինչպես նաև ՀՀ բանկերի կողմից իրականացվող ներդրումային պորտֆելի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով հիմնավորվել է մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության նկատմամբ ներդրումային պորտֆելի զգայունակության զնահատման նոր՝ սթրես-թեստավորման մեթոդը:

Հետազոտության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:

Աշխատանքում ընդհանրացված տեսական մեկնաբանումները կարող են կիրառվել բանկային ներդրումային պորտֆելի կառավարման գործընթացի հետազոտմանը վերաբերվող ատենախոսություններում ու աշխատություններում: Ատենախոսության մեջ մշակված առաջարկությունները կարող են գործնական միջոց հանդիսանալ ՀՀ առևտրային բանկերում ներդրումային ռիսկերի կառավարման, բանկային ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման և բանկային ներդրումային պորտֆելի կառավարման կատարելագործման ուղղությամբ:

Հետազոտության փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Երևանի «Գլաժոր» համալսարանում կազմակերպված պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների գիտական նստաշրջաններում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական երեք հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 147 էջի վրա, ներառյալ գրականության ցանկը (129անուն):

Ներածությունում հիմնավորվել են թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել են հետազոտության նպատակները և խնդիրները, առարկան և օբյեկտն, ուսումնասիրության տեսական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպված է գիտական նորույթը և դրա գործնական նշանակությունը, ինչպես նաև տրված է ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին «Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի արդյունավետ ներդրումային գործունեության իրականացման նախապայմանները» գլխում ներկայացված է ներդրումային քաղաքականության առանձնահատկությունները տնտեսական հարաբերությունների համակարգում, ինչպես նաև բանկերի ներդրումային գործունեության առանձնահատկությունները:

Շուկայական հարաբերությունների զարգացումն ուղեկցվում է ներդրումային օբյեկտների բազմազանության աճով, որի մեջ մտնում են իրական և ֆինանսական գործիքների տարբեր տեսակներ: Այս առումով հարկ է նշել, որ «նոր զարգացող երկրներում ներդրումների հիմնական մասը դասվում է իրական ներդրումների շարքին, մինչդեռ ժամանակակից շուկայական տնտեսությունում ներդրումների մեծ մասն իրականացվում է ֆինանսական ներդրումների տեսքով»¹:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման գործընթացը ինքնին բավականին աշխատատար է, և կարևոր է դիտարկել ոչ միայն ՀՀ-ի վարած քաղաքականությունը՝ ուղղված դրանց ներգրավմանը, այլև ուսումնասիրել համաշխարհային տնտեսական կառույցների արձանագրած ցուցանիշները: Այս առումով հատկանշական էր 2014թ. Համաշխարհային Տնտեսական Համաժողովի արձանագրած ցուցանիշները: Սրբակցության ինդեքսի գծով Հայաստանը 144 երկրների շարքում զբաղեցնում է 85-րդ տեղը, ինչը բավականին ցածր ցուցանիշ է, մինչդեռ Ադրբեջանը զբաղեցնում է 38-րդ տեղը, Թուրքիան՝ 45-րդը, Վրաստանը՝ 69-րդը, իսկ Ուկրաինան՝ 76-րդ տեղը: Սակայն բիզնես սկսելու և վարելու գործընթացում արձանագրվել է որոշակի առաջընթաց: Հայաստանը այս ցուցանիշով 2012 թ-ին զբաղեցրել էր 41-րդ տեղը, իսկ 2013 թ-ին՝ 37-րդը, այսինքն չորս աստիճան ամրապնդել է դիրքերը, սակայն բիզնես սկսելու տևողությամբ՝ 47-ից իջել է 66-րդ տեղը:²

Այդուսակի տեսքով ներկայացնենք ներդրումներ կատարելու արդյունավետության ցուցանիշներն ըստ տարբեր երկրների, հիմք ընդունելով «Doing Business 2014» զեկույցի նյութը /տես աղյուսակ 1/:

Երկրի ընդհանուր տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների շարքում իր կարևորությամբ առանձնահատուկ է ներդրումային քաղաքականության դերը: Այն անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում տնտեսական աշխուժացման, կառուցվածքային վերափոխումների իրականացման, գիտատեխնիկական առաջընթացի ապահովման, մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման, տնտեսական աճի կայուն տեմպերի հաստատման համար:

Աղյուսակ 1. Ներդրումներ կատարելու արդյունավետության ցուցանիշներն ըստ երկրների՝ ըստ «Doing Business 2014» զեկույցի*

Ցուցանիշներ	ՀՀ	Իռլանդիա	Լիտվա	Չեխիա	Հնդկաստան	Թուրքիա	Ադրբեջան	Սլովենիա
Բիզնես հիմնադրելու և վարելու հեշտություն (rank)	37	15	17	75	134	51	70	54
Բիզնեսն սկսելու տևողություն (rank)	66	5	74	86	121	43	13	41

¹ У Шарп, Г Александр, Д Бейли, "Инвестиции" - Москва, ИНФРА-М, 2001, էջ 9
Տես <http://gtmarket.ru/>

Ընթացակարգեր (թիվը)	9	4	7	8	13	6	6	5
Քիզման սկսելու օրերի թիվը	18	13	26	15	30	6	16	19
Գրանցումը (rank)	5	82	4	65	105	34	9	104
Վարկերի ձեռքբերում (rank)	28	12	43	43	28	68	12	84
Ներդրողների պաշտպանվածություն (rank)	88	5	88	88	38	53	18	18
Ներդրողների պաշտպանվածության ուժեղություն(0-10)	5.0	8.3	5.0	5.0	6.0	5.7	6.7	6.7
Քիզման փակում (rank)	47	6	34	113	140	118	81	38
Քիզման միջին տևողություն (տարի)	1.9	0.4	1.7	6.5	10.0	3.3	2.7	2.0

• Աղբյուրը՝ «Doing Business 2014» գեկույց, <http://www.doingbusiness.org/>

Ներդրումների ֆինանսավորումը մեծապես կատարվում է ներքին խնայողություններից, ինչը, փաստորեն, կրճատում է ընթացիկ պահանջարկը: Այդ իսկ պատճառով կարճաժամկետ հատվածում ներդրումային քաղաքականությունը, ըստ տեղային, փոփոխություններն է ոչ բավարար սպառողական պահանջարկը ներդրումային առաջարկի ավելացման ճանապարհով: Իսկ երկարաժամկետ հեռանկարում ներդրումներն ավելացնում են ոչ միայն պահանջարկը, այլև իրական առաջարկը:

Առևտրային բանկի վարկային - ներդրումային քաղաքականությունը ներառում է. դեպոզիտների ներգրավման և վարկավորման գործընթացում նվազագույն ռիսկի և առավելագույն շահույթի ապահովման համար վարկային շուկայի վերլուծություն և նպատակային շուկաների բացահայտում բանկի վարկային և դեպոզիտային պորտֆելների կառավարման օպտիմալացում խնդրահարույց վարկերի բաժնի կրճատման և բանկի իրացվելիության բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացում և այլն:

Վարկային քաղաքականության իրագործման արդյունքում ձևավորվում է բանկի վարկային - ներդրումային պորտֆելը: Ներկայացնենք 33 առևտրային բանկերի կողմից վարկային քաղաքականության իրագործման գերակա ուղղությունները՝ 1) Շրջանառու կապիտալի վարկավորում. վարկավորման առավել տարածված տեսակներից է և կիրառվում է փոխառուների կողմից զարգացման ծրագրերի իրականացման համար: Այսպես, վարկային միջոցների օգտագործումը հնարավորություն է տալիս տնտեսավարող սուբյեկտներին լուծելու շրջանառու միջոցների համալրման խնդիրը:

2) Կապիտալ ներդրումային ծախսերի վարկավորում, որոնց թվին են պատկանում արտադրական հզորությունների արդիականացումը, աշխատանքային տարածքների հագեցվածության բարձրացումը, ներդրումային եմիսյոնների ֆինանսավորումը և այլն:

3) Միջազգային առևտրային գործարքներ. վարկային գործառնությունների այս ձևն ուղղված է միջազգային առևտրային բանկերի կոնկրետ գործարքների ֆինանսավորմանը:

Վարկային քաղաքականության իրագործմանը ձևավորվում է բանկի վարկային ներդրումային պորտֆելը:


Տնտեսության իրական հատվածի հետ բանկերի փոխգործունեության շրջանակներում առավել մեծ կարևորություն ունեն բանկային համակարգի վարկային ներդրումները: 2013 թվականին 33 բանկային համակարգի վարկային ներդրումներն ավելացել են 20.4%-ով կամ 131.7 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 778.2 մլրդ դրամ: 7ամենատրության համար նշենք, որ 2012-ին վարկային ներդրումներն աճել էին 51.3%-ով կամ 219.3 մլրդ դրամով և կազմել 646.5 մլրդ դրամ:

2013-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 33 բանկային համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 57.8%-ը:

Ընդ որում՝ նշենք որ բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2013-ին կազմել են 1,346.1 մլրդ դրամ՝ աճելով 29.9%-ով կամ 309.9 մլրդ դրամով: 2012թ. այս ցուցանիշը կազմել է 1036.3 մլրդ դրամ:³

³ Կիսակարգաևն տվյալների աղբյուրը <http://www.amnbank.am/> և ՀՀ առևտրային բանկերի հաշվետվություններ <http://www.bank.am/>

Գծանկար 1. Բանկային համակարգի վարկային ներդրումների փոփոխության դինամիկան 2010-2013թթ. (մլրդ դրամ)




Այսպիսով, չնայած ֆինանսատնտեսական ճգնաժամին, ԳՀ բանկային համակարգն ապահովել է կայուն աճ՝ ներդրումային ակտիվների գծով:

Առևտրային բանկերի և տնտեսության իրական հատվածի հետ արդյունավետ փոխգործակցության հիմքն, այսպիսով, բանկերի ներդրումային և վարկային ռազմավարությունն է: Վերջիններիս օգնությամբ իրականացվում են բանկի այնպիսի գործառնությունները, ինչպիսիք են՝ զարգացման ծրագրերի ներդրումային ապահովումը, վարկային ծառայությունների մատուցումը, արժեթղթերով գործառնությունների արդյունքում երկրի արժեթղթերի շուկայի գործառնության ակտիվումը և այլն: Այն կարող է լուծել տնտեսության զարգացման առումով այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ տնտեսության կայունացումը, զարգացումը, տնտեսության կառուցվածքային վերակառուցումը, նորարարությունների ներդրումը, ճգնաժամային իրավիճակների հաղթահարումը: Վերոհիշյալ խնդիրների լուծման բնագավառում ԳՀ բանկերի դերը ներկայացնելու համար մեծ կարևորություն ունի նաև երկրի բանկային համակարգի կողմից տնտեսության տարբեր ճյուղերում կատարված ներդրումների կառուցվածքի ուսումնասիրությունը:

Այսպես, տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը 2013թ. կազմել է ԳՀ բանկային համակարգի ընդհանուր վարկային ներդրումների 60.2%-ը կամ 468.3 մլրդ դրամ, և այս ցուցանիշը տարվա ընթացքում աճել է 39.9%-ով կամ 133.5 մլրդ դրամով: Բանկային համակարգի կողմից տնտեսությունում իրականացված վարկային ներդրումների կառուցվածքն, ըստ ճյուղերի, ունի հետևյալ տեսքը.

Գծանկար 2. 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԳՀ բանկային համակարգի վարկային ներդրումներ կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)⁴



⁴ Վիճակագրական տվյալների աղբյուրը՝ Հայաստանի բանկերի միություն, «Բանկային համակարգի 2013թ-ի համառոտ վերլուծությունը, ՀՀ ԿԲ-ի պաշտոնական ինտերնետային կայք՝ www.cba.am

Առևտրային բանկերի դերը երկրի մակրոտնտեսական հատվածում ներկայացնելու համար վերլուծենք բանկային հիմնական ցուցանիշների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը, որը ցույց կտա, թե ինչքանով է երկրի բանկային համակարգը մասնակցում համախառն ներքին արդյունքի ձևավորման գործընթացին, հետևաբար նաև՝ ինչ դեր ունի տնտեսության իրական հատվածում:

Աղյուսակ 2. ՀՀ բանկային համակարգի մակրոտնտեսական բնութագրիչները⁵

Հ/Ը	Տնտեսությունում ՀՀ բանկային համակարգի դերը բնութագրող ցուցանիշները	01.01.2009 թ.	01.01.2010 թ.	01.01.2011 թ.	01.01.2012 թ.	01.01.2013թ.	01.01.2014թ.
1	Ընդհանուր ակտիվների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	20.4	25.0	28.4	42.5	44.7	54.9
2	Ընդհանուր վարկային ներդրումների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	9.5	13.6		24.6	28.5	40.3
3	Ընդհանուր կապիտալի հարաբերությունը ՀՆԱ-ին, %	4.5	5.3	6.5	9.1	9.4	9.9
4	Ֆիզիկական անձանց ավանդների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	5.4	6.3	6.4	10.7	11.6	14.8

2013 թվականին ՀՀ բանկային համակարգի վարկային ներդրումները ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 40.3 տոկոս և նախորդ տարվա համեմատ աճել 11.8 տոկոսով: Թեև այս հարաբերակցությամբ հանրապետությունը դեռ զիջում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի նույնական ցուցանիշ ունեցող երկրներին՝ Սերբիայում, օրինակ, վարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2013թ. կազմել է մոտ 55%, Ուկրաինայում՝ ավելի քան 50%, Ալբանիայում՝ 70%, այդուհանդերձ սա նշանակում է, որ ՀՀ բանկային համակարգի վարկային ներդրումներն աճման միտում ունեն և զնալով մեծ տեսակարար կշիռ են կազմում ՀՆԱ-ում:

Այսպիսով, տնտեսության իրական հատվածի հետ առևտրային բանկերի փոխգործակցության արդյունքում ձևավորվում է առևտրային բանկերի ներդրումային պարտֆելը՝ որպես բանկերի ներդրումային և վարկային գործառնությունների իրականացման անմիջական հետևանք: Այդ իսկ պատճառով ներդրումային պորտֆելի ձևավորման և կառավարման ընթացակարգերը պահանջում են մանրամասն ուսումնասիրություն:

Հայաստանի բանկային համակարգի համախառն վարկային ներդրումները ռեզիդենտ տնտեսությունում 2014թ. հուլիսի վերջին կազմել են 767,1 մլրդ դրամ՝ հունիսի ցուցանիշի նկատմամբ աճելով 1,5 տոկոսով կամ ավելի քան 11,6 մլրդ դրամով:

Բանկերի համախառն վարկային ներդրումների առավելագույն՝ 21,3 տոկոս մասնաբաժինը բաժին է ընկնում առևտրի ոլորտին: Այս ոլորտին հաշվետու ժամանակահատվածում բանկերը շուրջ 163,4 մլրդ դրամ են ուղղել (աճը նախորդ ամսվա ցուցանիշի համեմատ կազմել է 0,8 տոկոս):

Երկրորդ տեղում է արդյունաբերության ոլորտը՝ 20,1 տոկոս մասնաբաժնով, որի վարկավորումը նախորդ ամսվա համեմատ աճել է 0,2 տոկոսով և կազմել է 152,4 մլրդ դրամ:

Երրորդ տեղում են սպառողական վարկերը՝ 18,7 տոկոս մասնաբաժնով, որոնք հունիսի համեմատ կրճատվել են 0,4 տոկոսով: Առևտրային բանկերի սպառողական

⁵ Sbu «Հայաստանի բանկային համակարգի 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի բանկերի միություն» Փետրվար, 2014թ. էր 3. <http://www.sbu.am/np/eng/8747.pdf>

վարկերը հուլիսի վերջին կազմել են 143,3 մլրդ դրամ: Բանկերի հիփոթեքային վարկերը ռեզիդենտ տնտեսությունում կազմել են շուրջ 85,1 մլրդ դրամ՝ հունիսի ցուցանիշների համեմատ աճելով 2 տոկոսով:

ՀՀ դրամով վարկերի ընդհանուր ծավալի մեջ երկարաժամկետ վարկերի բաժինը կազմել է 76.8% կամ 271.2 մլրդ.դրամ, իսկ կարճաժամկետ վարկերի բաժինը՝ 23.2% կամ 82 մլրդ.դրամ: Երկարաժամկետ արտարժույթային վարկերի բաժինը կազմել է 78.7% կամ 307.2 մլրդ.դրամ, իսկ կարճաժամկետ վարկերի բաժինը՝ 21.3% կամ 82.9 մլրդ.դրամ:


ՀՀ բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրած ընդհանուր վարկերում արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը վերջին տարիներին ցուցաբերում է նվազման միտում, ընդ որում առավել արտահայտված նվազում է արձանագրվել հաշվետու տարում. նվազել է 6.3 տոկոսային կետով և կազմել 63,6%, դրամով վարկային ներդրումներն ավելացել են 29,8%-ով, որի արդյունքում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում աճել է 2,1 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 29,6%:

2013թ. նոյեմբերի 1-ի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր ակտիվների աճի 67.0%-ը բաժին է ընկել վարկային ներդրումներին: Տարվա ընթացքում բանկային համակարգի վարկային ներդրումները ավելացել են 34%-ով կամ 52.4 մլրդ դրամով և կազմել 208.1 մլրդ դրամ, ընդ որում ոչ ռեզիդենտների վարկային ներդրումները աճել են 23%-ով կամ 3.7 մլրդ դրամով և կազմել 19.6 մլրդ դրամ, իսկ ռեզիդենտների վարկային ներդրումները 35%-ով կամ 48.7 մլրդ դրամով և կազմել 188.5 մլրդ դրամ:

2013թ-ին տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ (արդյունաբերության ճյուղերը դիտարկվել են որպես մեկ համընդհանուր ճյուղ):

Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքում 2014 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ դարձյալ խոշոր աճ է արձանագրվում սպառողական վարկերում 58% (22.6 մլրդ դրամով), և առևտրի ոլորտի 35% (11.0 մլրդ դրամով) վարկերում: Արդյունաբերության ճյուղում վարկավորման ծավալի մեծ աճ է գրանցվել սննդի արդյունաբերությունում 34.3%-ով (3.6 մլրդ դրամով):⁶

Գծանկար 3 Բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրած վարկերը ըստ տնտեսության ճյուղերի (հազ դրամ)




2014թ հոկտեմբերի 1-ի դրությամբ վարկային ներդրումներում երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է՝ այսինքնավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքներով և բանկերի կողմից վարվող զգուշավոր վարկային քաղաքականությամբ: Այս երկարաժամկետ վարկերը միջին հաշվով տատանվում են 5 տարի

⁶ http://www.cba.am/Storage/AM/downloads-parberakan/statistike/textakan/r/vich_text_09.pdf

մարման ժամկետայնության շրջանակներում (այսինքն՝ տնտեսությունում ձևավորվել է ավելի երկար ժամկետայնությամբ վարկերի պահանջ):

Չճանկար 4. Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրած վարկերը ըստ ժամկետայնության (հազար ՀՀ դրամ)



Բանկային համակարգում այսօր նկատվում է «երկար փողերի» սղություն, որը երկարաժամկետ վարկեր տրամադրելու կարևորագույն նախապայմանն է: Երկարաժամկետ միջոցների սղության հիմնական պատճառը «երկար փող» ստեղծող այնպիսի ինստիտուտների բացակայությունն է հանրապետությունում, ինչպիսիք են մասնավոր կենսաթոշակային հիմնադրամներն ու լիարժեք գործող ապահովագրական ընկերությունները: Միայն նման ինստիտուտների ներդրումը կարող է երկարաժամկետ վարկավորման խթան հանդիսանալ:

ՀՀ-ում երկարաժամկետ դրամական միջոցների ձեռքբերման և տնտեսության երկարաժամկետ վարկավորման գործընթացին ևս մեծապես նպաստում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում բանկերի միջնորդությամբ տրամադրվող երկարաժամկետ նպատակային վարկերը:

ՀՀ տարածքում գործող 7 բանկեր ստանալու են Գերմանա-հայկական հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, «Եվրասիա» հիմնադրամի, ԳԾԾ (Հյուսիս-Արևելյան գյուղատնտեսական ծառայությունների ծրագիր), Միջազգային ֆինանսական կորպորացիայի, Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության կենտրոնի, ՄԱՀ (միջազգային միգրացիայի հիմնադրամ) կողմից իրականացվող վարկային ծրագրեր:

Ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի աճի համեմատությամբ սպառողական և առևտրային վարկերի առանջանցիկ աճի տեմպերը համազգային են այդ վարկերի տեսակարար կշիռ մեծացմանը: Նման միտումների պահպանման ղեկավարումն ապագայում կբարձրանա վարկային ներդրումների ոլորտային կենտրոնացվածության մակարդակը: Վերջինս որոշվում է Հերֆինդալ-Հիրմանի կենտրոնացվածության գործակցի միջոցով, որով ստացված արդյունքները տատանվում են 0-ից 1-ի միջակայքում, և որքան այն մոտ է 0-ին, այնքան համարվում է նվազ կենտրոնացված: Ըստ տնտեսության ծյուղերի վարկավորման այս գործակիցը 2013թ. նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.01-ով և կազմել 0.15, ինչը բավականին ցածր է և վկայում է ցածր կենտրոնացվածության մասին:

Առանձին բանկերում վարկերի ծյուղային կենտրոնացվածության տեսանկյունից այս ցուցանիշի մեծությունը ըստ բանկերի միջինի, նախորդ տարվա համեմատ նվազել է 0.02-ով և կազմել 0.26, ինչը վկայում է, որ չնայած տարվա ընթացքում առանձին բանկերում վարկերի ծյուղային կենտրոնացվածությունը որոշակի նվազել է, սակայն մի շարք բանկեր ղեռն վարկավորման ծյուղային կենտրոնացվածությամբ համեմատաբար բարձր մակարդակ ունեն: Այսպես, 01.04.2014թ. դրությամբ ըստ տնտեսության ոլորտների բանկերի վարկային վարկային ներդրումների 40.5%-ը կենտրոնացված է 3 բանկերում, իսկ մնացած 50.5%-ը բաշխված է մնացած 18 բանկերի վրա: Ընդ որում, որոշ բանկեր ունեն վարկավորման ծյուղային կենտրոնացվածության բարձր մակարդակ. Ակբա Կրեդիտ Ազրիտ բանկի վարկային ներդրումների հիմնական ծավալը կենտրոնացված են գյուղատնտեսության ոլորտում կազմելով տնտեսության վարկային ներդրումների 66.4%-ը, իսկ օրինակ՝ Սրղշինիկմետբանկի վարկային ներդրումները բաշխված են արդյունաբերության ծյուղին կազմելով 32.7%: Ֆինանսական միջնորդության ցուցանիշ է նաև բանկային համակարգի ավանդների և վարկերի միջին տոկոսադրույթները: Բանկային համակարգում առկա տոկոսադրույթի ռիսկը ներկայումս

գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա: Վերջին տարիներին վարկերի և ավանդների շուկայական տոկոսադրույքները ցուցաբերել են նվազման կայուն վարքագիծ:

Ատենախոսության երկրորդ՝ «Ներդրումային պորտֆելի ձևավորման և կառավարման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» գլխում ներկայացված են ներդրումային ռիսկերի կառավարման տեխնոլոգիան ճգնաժամային իրավիճակներում, ինչպես նաև ՀՀ բանկերի ներդրումային պորտֆելի ձևավորման ռազմավարության առանձնահատկությունները:

Միջազգային ֆինանսական ճգնաժամի պայմաններում վարկային ռիսկի կառավարման նպատակով բանկերի գերակշռող մեծամասնությունը վարել է զգուշավոր վարկային քաղաքականություն ուղղված վարկառուի վարկունակության, վարկավորման ոլորտների առավել խոր ուսումնասիրության: Բանկերը վարկային ռիսկի կառավարման նպատակով ավելի են խստացրել պահանջները՝ կապված վարկերի տրամադրման գծով սահմանափակումների կիրառման, վարկերի տրամադրման դիմաց անհրաժեշտ ապահովվածության ներգրավման, վարկային մոնիթորինգի իրականացման, վարկերի գծով հնարավոր կորուստների պահուստների ձևավորման հետ:

Ճգնաժամի պայմաններում վարկային ռիսկը մեղմելու նպատակով ՀՀ առևտրային բանկերի կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Վերանայվել են տարածքային ստորաբաժանումների համար տարբեր վարկատեսակների տրամադրման սահմանաչափերը, հաճախորդների վարկունակության գնահատման մեթոդները,
 2. Սահմանվել են հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության գործակիցներ, ինչպես նաև վարկավորման առավելագույն զուտարի որոշման մեթոդներ,
 3. Մշակվել են առաջարկություններ վարկային ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում նախկին 70%-ի փոխարեն մինչև 60% և մեկ փոխառուի գծով ռիսկի ներքին սահմանաչափը 19.5%-ից մինչև 16.5% իջեցման ուղղությամբ:
 4. Կրճատվել են վարկերի տրամադրման ժամկետները, մեկ փոխառուի առավելագույն սահմանաչափերը,
 5. Խստացվել են
 - բոլոր վարկատեսակների գծով գրավ/վարկ հարաբերակցությունը,
 - գործող վարկերի գրավների մոնիթորինգը,
 - վարկերի մոնիթորինգը,
 6. Մշակվել են իրավիճակի հնարավոր զարգացման տարբեր ստրեյտեջներ:
- Կատարվել են տնտեսության ճյուղերի տնտեսական վիճակի փոփոխության (ինչպես ճյուղի ներսում, այնպես էլ այլ ճյուղերի հետ համեմատած) կանխատեսումներ:
- Իրականացված միջոցառումները թույլ են տվել պահպանել ՀՀ բանկերի վարկային պորտֆելի բարձր որակը:

ՀՀ առևտրային բանկերը 2013թ. հետճգնաժամային իրավիճակներում իրականացրել են վարկային ռիսկի հետևողական, արդյունավետ կառավարում վարկային կենսացիկլերի բոլոր փուլներում (իրականացնելով վարկառուների վարկունակության օբյեկտիվ վերլուծություն, ապահովելով վարկային քաղաքականությամբ սահմանված սկզբունքների պահպանումը, վարկավորման գծով հիմնական սահմանաչափերը, ներգրավելով վարկի դիմաց բավարար ապահովվածություն, իրականացնելով հեռակա (օֆսայթ) և տեղում (օնսայթ) մոնիթորինգ և խնդրահարույց վարկերի վերադարձման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ):

Վերլուծելով ներդրումային ռիսկի կառավարման հիմնական եղանակները, ինչպես նաև ՀՀ բանկերի կողմից կիրառվող մոտեցումները և ուսումնասիրելով վարկային ռիսկի կառավարման միջազգային փորձը՝ հեղինակի կողմից առաջարկվել է կիրառել հետևյալ մոտեցումները, որոնք, ըստ էության, կբարձրացնեն վարկային ռիսկի կառավարման արդյունավետությունը ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակներում.

1. հաճախորդի վարկունակության գնահատման ժամանակ հաշվի առնել նաև նրա ոլորտային պատկանելիությունը և կայունության աստիճանը մակրոցնցումների ընթացքում: Դա կարելի է որոշել ճյուղի մակրոտնտեսական գործունեության փոփոխության հետևանքով հաճախորդի գործունեության հիմնական ցուցանիշների փոփոխության վերլուծությամբ: Կարելի է իրականացնել նաև հաճախորդի գործունեության SWOT վերլուծություն, որի արդյունքում ավելի պարզ պատկերացում կապահովվի նրա գործունեության ուժեղ և թուլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների մասին:

2. Ճգնաժամի պայմաններում, բանկերը պետք է մեծ ուշադրություն դարձնեն նաև օպտիմալ վարկային ապրանքների մշակման հիմնախնդիրին: Դրանք այն ապրանքներն են, որոնք գրավիչ են նպատակային շուկայի համար, և մյուս կողմից, մակրոտնտեսական պայմաններում համապատասխանում են բանկի վարկային քաղաքա-

կանությանն ու օպտիմալ են վարկային ռիսկի ընդունելի մակարդակի տեսանկյունից: Այսինքն, վարկային ռիսկի կառավարման ժամանակ պետք է հաշվի առնել և հաճախորդի, և վարկային ապրանքի ռեյտինգը.

3. Իրականացնել սթրես-թեստավորում: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի սահմանման՝ այն մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության նկատմամբ վարկային պորտֆելի զգայունակության գնահատման մեթոդ է: Այսինքն՝ սա վերլուծական գործիք է, որի միջոցով հնարավոր է որոշել, թե ինչպես է փոխվում վարկային պորտֆելի արժեքը՝ մակրոտնտեսական գործոնների փոփոխության հետևանքով: Սթրես-թեստավորման տեսակներն են՝ միագործոն (դիտարկվում է ռիսկի գործոններից մեկի փոփոխության ազդեցությունը վարկային պորտֆելի արժեքի վրա), և բազմագործոն (դիտարկվում են միանգամից մի քանի գործոնների փոփոխության ազդեցությունը), և այն ենթադրում է հնարավոր սցենարների մշակում (պատմական, հիպոթեզային):

3.7 առևտրային բանկերի ներդրումային ակտիվության բարձրացման և տնտեսության իրական հատվածում վարկային ներդրումների ռիսկայնության նվազեցման նպատակով առաջարկվել է բանկերի ներդրումային պորտֆելի ձևավորման և կառավարման նոր ընթացակարգ՝ բաղկացած հետևյալ 5 փուլերից:

Առաջին փուլը պորտֆելային ռազմավարության և պարտֆելի տիպի ընտրությունն է, որը պայմանավորված է բանկի ներդրումային քաղաքականության նպատակներով:

Այս փուլում սահմանվում են պորտֆելային ռազմավարության նպատակները, սահմանափակումները և չափանիշները: Որպես սահմանափակում՝ դիտարկվում է պորտֆելի ռիսկայնության մակարդակը, որպես չափանիշ՝ եկամտաբերության մակարդակը: Այս փուլի արդյունքում հստակ սահմանվում է պորտֆելի տիպը՝ իր կոնկրետ բնութագրիչներով:

Երկրորդ փուլում կատարվում է ֆինանսական գործիքների ներդրումային որակի գնահատում: Ժամանակակից պորտֆելային տեսության համաձայն՝ ներդրումային պորտֆելում ընդգրկված ֆինանսական գործիքների որակի գնահատման հիմնական չափանիշներն են եկամտաբերության, ռիսկի և դրանց վարիացիայի ցուցանիշները: Վարիացիան տվյալ ղեպում դիտարկվում է որպես վիճակագրական բնութագրիչ, որը ցույց է տալիս երկու դիտարկվող մեծությունների նմանությունը կամ տարբերությունը շարժման, փոփոխման ուղղության և փոփոխման չափի մեջ:

Կորելացիային գործակցի հաշվարկը կարևոր նշանակություն ունի պորտֆելի դիվերսիֆիկացման համար: Վերջինս կատարվում է բացասական կորելացիայով բնութագրվող պարամետրերով գործիքներ պերտֆելում ներառելու միջոցով: Այլ կերպ ասած՝ պորտֆելում ինչքան շատ են բացասական կորելացիա ունեցող գործիքները, այնքան շատ է դիվերսիֆիկացված պորտֆելը: Պորտֆելի դիվերսիֆիկացիան հեղինակի կողմից դիտարկվել է որպես ռիսկայնության մակարդակի նվազեցման արդյունավետ ճանապարհ: Այսպիսով, այս փուլի արդյունքում պարզվում են այն ֆինանսական գործիքները, որոնք առավել շատ են համապատասխանում պորտֆելային ռազմավարության նպատակներին:

Երրորդ փուլում բանկի կառավարման մարմինների կողմից ընդունվում է ներդրումային որոշում ներդրումային ռեսուրսների բաշխման չափաբանակի և ընտրված ֆինանսական գործիքների ձեռքբերման վերաբերյալ: Այս փուլում որոշվում է նաև պարտքային և բաժնեմասային արժեթղթերի տեսակարար կշիռը պորտֆելի կառուցվածքում, այնուհետև պորտֆելը կառուցվում է ըստ ժամկետայնության: Այս փուլի արդյունքում ձևավորվում է վերջնական պորտֆելը:

Չորրորդ փուլը պորտֆելի օպտիմալացման փուլն է. Ելնելով արտաքին շուկայական իրավիճակների փոփոխության գնահատականից՝ իրականացվում է պորտֆելի օպտիմալացում: Վերջինիս նպատակն է շուկայական իրավիճակների փոփոխության հետևանքով ձևավորված պորտֆելում իրականացնել որոշակի ճշգրտումներ՝ ներդրումային նպատակների արդյունավետ իրականացման նպա-

տակով: Այս փուլում հնարավոր է փոփոխությունների իրականացում կորելացիայի գործակցի և դիվերսիֆիկացիայի գծով:

Վերջին *հիմնգերորդ փուլում* իրականացվում է առևտրային բանկի ներդրումային պորտֆելը բնութագրող հիմնական ցուցանիշների զնախատում՝ պարզելու համար, թե որքանով է ձևավորված պորտֆելը համապատասխանում նախապես ծրագրավորված պորտֆելին: Գնահատումն իրականացվում է երկու ուղղությամբ՝ ռիսկայնության և եկամտաբերության:

Առևտրային բանկի ֆինանսական ներդրումային պորտֆելի վերլուծության հաջորդ կարևոր ուղղությունը վարկային ներդրումների պորտֆելն է: Բանկի վարկային ներդրումների պորտֆելի ձևավորման ռազմավարությունը հիմնվում է բանկի վարկային քաղաքականության վրա: Վարկային ներդրումային պորտֆել ձևավորելիս բանկը առաջնորդվում է հետևյալ սկզբունքով՝ տրամադրել այնպիսի վարկեր, որոնք այլ հավասար պայմաններում ապահովում են ամենաբարձր եկամտաբերության մակարդակ: Ընդհանուր առմամբ, որոշակի կոնկրետ հատվածում բանկի վարկային պորտֆելի եկամտաբերությունը կախված է պորտֆելի ծավալից և վարկային տոկոսադրույքից: Վերջինս ընդհանրացնող ցուցանիշ է, քանի որ դրա միջոցով են անմիջականորեն որոշվում՝ վարկի ժամկետները, ռիսկայնության աստիճանը, վարկի ապահովվածությունը, տոկոսի հաշվարկման և վճարման մեթոդները:

Առևտրային բանկի վարկային ներդրումային պորտֆելի եկամտաբերությունը կախված է շուկայական տոկոսադրույքից, վարկի ծավալից և կառուցվածքից, միջբանկային շուկայում մրցակցության մակարդակից, վարկավորման ուղղությունները և ծավալները որոշելու բանկի հնարավորությամբ:

Այսպիսով առևտրային բանկի վարկային ներդրումային պորտֆելը ձևավորվում է բանկի վարկային քաղաքականության հիման վրա: Վերջինս սահմանում է բանկի վարկային պորտֆելի ձևավորման կանոնները, իրենից ներկայացնում է նրանում ներառված բոլոր վարկերի հաշվեկշռային արժեքը: Դրա արդյունավետությունը որոշվում է եկամտաբերություն ռիսկ հարաբերակցությամբ, իսկ ձևավորման նպատակն է ռիսկի ընդունելի մակարդակի պայմաններում ապահովել եկամտաբերության բարձր մակարդակ:

ՀՀ առևտրային բանկերի ներդրումային քաղաքականության հիմնական նպատակներից առանձնապես կարելի է կարևորել

- բանկի ռազմավարական նպատակների իրագործումը և հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված հիմնական ցուցանիշների ապահովումը,
- ընթացիկ ժամանակաշրջանում ներդրումային մեծ եկամտի ապահովումը,
- ֆինանսական ներդրումների հետ կապված ռիսկի նվազեցումը,
- ներդրումային պորտֆելի իրացվելիության անհրաժեշտ մակարդակի ապահովումը,
- ներդրվող կապիտալի աճի բարձր տեմպերի ապահովումը,
- ներդրումային գործիքներով գործառնությունների արդյունքում հանրապետության ներդրումային միջավայրի զարգացման գործընթացին աջակցությունը,
- ներդրումային գործառնությունների ծավալով ՀՀ բանկային համակարգում առաջատար դիրքերի ապահովումը և այլն:

ՀՀ առևտրային բանկերի ներդրումային պորտֆելի վերլուծությունը սկսվել է իրական ներդրումների պորտֆելի վերլուծությամբ՝ կարևորելով դրա դերը բանկի ներդրումային պորտֆելի մյուս ուղղությունների արդյունավետ գործունեությունն ապահովելու գործում: Բանկերի իրական ներդրումների պորտֆելն ուղղված է բանկի զարգացմանը, գործունեության արդյունավետության բարձրացմանը: Բանկերի իրական ներդրումների պորտֆելի վերլուծության նպատակով առանձնացվել են բանկի հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների պորտֆելները:

Իրական ներդրումների պորտֆելի կառուցվածքն, ըստ հիմնական միջոցների, ներկայացված է հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 3. ԳՀ առևտրային բանկերի իրական ներդրումների պորտֆելի կառուցվածքն՝ ըստ հիմնական միջոցների⁷

հազար յուան

	Դոլ	Եվրո	Համակ. և կամավ միջոցներ	Փոխար. միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Գնմ. միջոցներ գծով կապիտալ ներդրումներ	Վարձակալված հիմն. միջոցներ գծով կապիտալ ներդրումներ	Ընդամենը
<i>Մնացորդը 31.12.2011</i>	<i>2345776</i>	<i>74948400</i>	<i>15466368</i>	<i>3198480</i>	<i>7578080</i>	<i>24538016</i>	<i>12811568</i>	<i>118806688</i>
Ավելացում	85712	34298768	15748272	1935184	22216624	20430160	5205104	99919824
Օտարում (այլ ելքեր)		(51,976)	(636,357)	(71,474)	(751,703)	(2,569,471)	(15,450)	(4,096,431)
Վերագնահատում		37614928						37614928
<i>Մնացորդը 31.12.2012</i>	<i>2431456</i>	<i>14606448</i>	<i>21356128</i>	<i>3990064</i>	<i>17767456</i>	<i>3859840</i>	<i>6249472</i>	<i>201684880</i>
Ավելացում	78400	4789584	4253584	107600	3000640	1396688	66192	13692688
Օտարում (այլ ելքեր)			(4103200)	(108320)	(2110480)	(4393856)		(10715856)
<i>Մնացորդը 31.12.2013</i>	<i>2509888</i>	<i>150820032</i>	<i>21506512</i>	<i>3989328</i>	<i>18657616</i>	<i>862672</i>	<i>6315664</i>	<i>204661712</i>
Չուտ հաշվեկշռային արժեք								
Առ 31.12.2012	2431488	120228288	8683248	2003296	11909632	3859840	5632208	154748000
Առ 31.12.2013	2509888	127221584	9309472	1340736	1120360	862872	6193984	148558688

ԳՀ բանկերի իրական ներդրումային գործիքներում ներդրումների իրականացման արդյունավետության գնահատման համար օգտագործվում են տարբեր ցուցանիշներ: Գնահատման համար առավել նպատակահարմար է դիտարկել բանկերի զուտ շահույթի և հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումների հարաբերակցությունը, որը ցույց կտա հիմնական միջոցներում կատարված միավոր ներդրման արդյունքում ապահովված զուտ շահույթի մեծությունը: Ինչքան մեծ է այս ցուցանիշը, նշանակում է ներդրումների արդյունավետությունը մեծ է:

Այնուամենայնիվ, ԳՀ բանկերի հիմնական միջոցներում իրական ներդրումների արդյունավետության ցուցանիշների ցածր արժեքները լուրջ հիմնախնդիր են բանկերի իրական ներդրումների պորտֆելի կառավարման տեսանկյունից և պահանջում են համապատասխան միջոցառումների իրականացում՝ ցուցանիշի արժեքը բարձրացնելու ուղղությամբ:

ԳՀ բանկերի ներդրումային արժեթղթերի պորտֆելի եկամտաբերության հաշվարկման համար կարևորվում է նաև բանկերի ներդրումային գործունեությունից դրամական հոսքերի դինամիկան՝ վերլուծելով բանկերի ինչպես իրական ներդրումային գործիքների, այնպես էլ՝ ներդրումային արժեթղթերի առթ ու վաճառքի դինամիկան 2011 - 2013 թվականներին:

⁷ Աղյուսակը կազմվել է 2013թ. դեկտեմբերի 31 ի դրությամբ՝ ԳՀ առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Աղյուսակ 4.33 առևտրային բանկերի ներդրումային գործունեությունից դրամական հոսքերը
հազար դրամ

	առ 31.1.2011	առ 31.12.2012	առ 31.12.2013
Ներդրումային արժեթղթերի առք	215970321	112432139	1054747
Ներդրումային արժեթղթերի վաճառք և իրացում	363784944	195244209	1543256
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	30199474	41522600	2680710
Հիմնական միջոցների վաճառք	231230	16929	18240
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	610185969	349215877	5298953

Ինչպես երևում է աղյուսակից, բանկի ներդրումային արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունների ծավալը 2011-2013թթ. նվազման միտում է ունեցել: Ներդրումային արժեթղթերի առավելագույն ծավալով վաճառքը տեղի է ունեցել 2011թ.: Ցուցանիշների նվազման միտումները բացատրելու համար անհրաժեշտ է վերլուծել բանկերի արժեթղթերի տոկոսային եկամտաբերության դինամիկան:

Աղյուսակ 5.33 բանկերի արժեթղթերի պորտֆելի տոկոսային եկամուտների և ծախսերի դինամիկան
հազար դրամ

	Տոկոսային եկամուտներ		Տոկոսային ծախսեր		Զուտ տոկոսային եկամուտ (ծախս)	
	31.12.2012	31.12.2013	31.12.2012	31.12.2013	2012թ.	2013թ.
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտներ	3781840	412336			3813840	412336
«Ոնկար» պայմանագրերից	908224	1845072	1605840	1075360	(729616)	449712
Պարտքային արժեթղթերից	6770560	6374320	177056	1249856	6593824	5124464
Ընդամենը	11460944	8631728	1782896	2645216	9678048	5986512

2013 թվականին նախորդ տարվա համեմատ զրանցվել է վաճառքի համար մատչելի ներդրումներից տոկոսային եկամուտների կտրուկ նվազում՝ մոտ 340.1 հազար դրամով, ինչը և պատճառ է հանդիսացել բանկերի կողմից ներդրումային արժեթղթերի պորտֆելի ծավալի կրճատման: Նման նվազումը պայմանավորված է ֆինանսական ճգնաժամի արդյունքում բանկերի ներդրումային արժեթղթերի պորտֆելում ներառված ակտիվների եկամտաբերության նվազմամբ: Ինչ վերաբերում է պարտքային արժեթղթերին, ապա նրանց տոկոսային եկամտաբերությունը ևս նվազել է 2013թ: Սակայն նույնը չի կարելի ասել բանկի ածանցյալ՝ ռեպո պայմանագրերի մասին, որոնց տոկոսային եկամտաբերությունը ավելացել է ավելի քան 2 անգամ՝ 2013 թվականին ապահովվելով 449.712 հազար դրամի զուտ տոկոսային եկամուտ:

ՀՀ բանկերի ներդրումային արժեթղթերի պորտֆելի վերլուծության կարևոր ուղղություններից մեկն է պորտֆելի դիտարկումը՝ ըստ ժամկետայնության, որը ներկայացված է ՀՀ 3 խոշորագույն առևտրային բանկերի՝ Արդշինհնվեստբանկի, Ամերիաբանկի և Զարգացման Հայկական բանկի օրինակով՝ ներքոհիշյալ աղյուսակով:

Աղյուսակ 6. Արդշինհինվեստբանկի, Ամերիաբանկի և Զարգացման Հայկական բանկի ներդրումային արժեթղթերի պորտֆելի կառուցվածքը՝ ըստ ժամկետայնության

հազար դրամ

	մինչև 1 ամիս	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1 - 5 տարի	5 տարուց ավելի	մարման ժամկետ չունեցող	ժամկետանց	Ընդամենը
Առ 31.12.2007								
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	2980881	6233781	2782906	7023333	3020757			22042260
Առ 31.12.2008								
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	499446	939519	1559802	7569381	3928572			14496720
Պարտավորություններ բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով			4533195					4533195
Առ 31.12.2009								
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	1647585	800523	6115242	22963665	688023	67116		32282154

ՀՀ 3 առևտրային բանկերի վաճառքի համար մատչելի արժեթղթերի պորտֆելում ամենամեծ տեսակարար կշիռը 2011, 2012 և 2013 թվականներին ունեցել են երկարաժամկետ՝ 1 - 5 տարի մարման ժամկետ ունեցող արժեթղթերը: Դա թույլ է տալիս եզրակացնել, որ վերոհիշյալ բանկերի ներդրումային արժեթղթերի պորտֆելը երկարաժամկետ է: Բացի այդ, պորտֆելում գերակշռում են նաև միջին ժամկետայնության՝ 3 - 12 ամիս մարման ժամկետով, արժեթղթերը, ինչի արդյունքում պորտֆելը իրացվելիության տեսանկյունից համարվում է միջին իրացվելի:

ՀՀ բանկերի վարկային ներդրումների պորտֆելի վերլուծության ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել նաև պորտֆելի ժամկետային կառուցվածքը.

Աղյուսակ 7 ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումների պորտֆելի կառուցվածքը՝ ըստ ժամկետայնության
մլն ՀՀ դրամ

	մինչև 1 ամիս	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1 - 5 տարի	5 տարուց ավելի	ժամկետանց	Ընդամենը
31.12.2011	45503	125000	298200	168750	157245	40200	983448
31.12.2012	146500	154800	201600	334284	271784	62500	1012650
31.12.2013	201540	235400	275800	271489	246120	38440	1268789

Ինչպես վկայում են աղյուսակում բերված տվյալները, ՀՀ բանկերի հաճախորդների մոտ 2011-2013 թվականներին գերակշռել է միջինժամկետ (3-12 ամիս) վարկային ներդրումների նկատմամբ պահանջը, որի առավելագույն արժեքը դրսևորվել է 2013 թվականին՝ կազմելով մոտ 298,2 մլն դրամ, իսկ երկարաժամկետ վարկերի առավելագույն արժեքը դրսևորվել է 2012թ.՝ 334,3 մլն դրամ:

Այսպիսով, ՀՀ առևտրային բանկերի ներդրումային պորտֆելի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ պորտֆելի կառավարման տեսանկյունից առկա են որոշակի հիմնախնդիրներ՝ կապված պորտֆելի եկամտաբերության ոչ բավարար բարձր մակարդակի հետ: Ընդ որում հիմնախնդիրներն առկա են բանկերի ներդրումային պորտֆելի երեք ուղղություններում: Մասնավորապես, վարկային ներդրումների պորտֆելում հիմնախնդիրն այն է, որ տնտեսության ռազմավարական նշանակություն ունեցող որոշ ոլորտներում բանկի վարկային ներդրումները ցածր տեսակարար կշիռ են կազմում: Խոսքը ծառայությունների, բարձր տեխնոլոգիաների ոլորտների, գիտատար, շինանյութերի արտադրության, լեռնահանքային արդյունաբերության, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի աջակցության մասին է:

ինչ վերաբերում է ներդրումային արժեթղթերի պորտֆելին, ապա նրանում հիմնախնդիրները մեծապես պայմանավորված են ֆոնդային շուկայի զարգացման ցածր աստիճանով:

Ատենախոսության 3-րդ «Ներդրումային պորտֆելի կառավարման արդյունավետության բարձրացման արդի գերակայությունները 33 առևտրային բանկերում» գլխում քննարկվել են 33 առևտրային բանկերի ներդրումային պորտֆելի օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական չափանիշները:

Պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով՝ վերջին տարիներին 33 բանկերի վարկային ներդրումային քաղաքականությունը իրագործվում է որոշակի ռիսկային սահմանափակումների շրջանակներում:

Այնուհանդերձ, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը որոշակի պատճառներով շրջանցեց Հայաստանյան բանկային ոլորտը: 33 տնտեսության վրա ճգնաժամի ազդեցությունը թույլ է մի շարք պատճառներով: Նախ Հայաստանը ինտեգրված չէ միջազգային արժեթղթերի շուկայի խոշոր և միջին մասնակիցների շրջանակներին: Բացի այդ, հանրապետությունում հիփոթեքային շուկան զարգացման մեկնարկային փուլում է և փոխկապված է ֆինանսական ճգնաժամում ընդգրկված երկրների նրկու անգամ ավելի պահանջարկ, քան թողարկման ծավալն է: Այս առումով նշվում է, որ 33 բանկային համակարգը չունի իրացվելիության խնդիր՝ անհրաժեշտ վերահսկողության համակարգի գործադրման շնորհիվ:

Բացի այդ, 33 բանկային համակարգի իրացվելիության աստիճանը բավականին բարձր է: Եվ պատահական չէ, որ պետական պարտատոմսերի՝ որպես իրացվելիության ապահովման գործիքների ձեռքբերման համար բանկերը շարունակում են ներկայացնել առևճարի նրկու անգամ ավելի պահանջարկ, քան թողարկման ծավալն է: Այս առումով նշվում է, որ 33 բանկային համակարգը չունի իրացվելիության խնդիր՝ անհրաժեշտ վերահսկողության համակարգի գործադրման շնորհիվ:

Սակայն որքան էլ Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական համակարգը քիչ կապեր ունենան համաշխարհայինի հետ, այնուամենայնիվ, համաշխարհային երևույթները չեն կարող լիովին շրջանցել Հայաստանը:

Ֆինանսական ճգնաժամի անուղակի ազդեցություններն այս կամ այն չափով դրսևորվում են նաև մեզ մոտ: Բանկային համակարգում դրանք առավելապես դրսևորվում են սպասումներով և զգուշավորությամբ: Այս առումով, 33 առևտրային բանկերը փորձում են իրենց ապահովագրել հնարավոր «տխուր» հետևանքներից, որոնք կարող են առաջանալ ճգնաժամի երկար պահպանվելու դեպքում:

Այլ կերպ ասած, 33 բանկային համակարգում ավելացել են ռիսկերի կառավարման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները, ինչպես համարժեք, նրանք որոշ չափով կոշտացրել են ֆինանսական միջոցների տեղաբաշխման գործընթացները: Ավելին, առանձին բանկերի երկարատև վարկավորման գործընթացում նկատվում են սառեցման, ինչպես նաև տոկոսադրույքների բարձրացման և ժամկետայնության սահմանափակման միտումներ:


Չնայած իրավիճակի արդյունքում որոշ առևտրային բանկեր իրենց վարկային պորտֆելը թանկացրել են գրեթե 2 տոկոսով: Այսպես օրինակ, եթե մինչ ճգնաժամային ցնցումները 33 բանկային համակարգում առաջատար դիրքեր ունեցող «Հայէկոնոմբանկը» ԲԲԸ-ն հիփոթեքային վարկերը տրամադրում էր առաջվելագույնը 14 տոկոսով, ապա ճգնաժամով պայմանավորված սպասումների արդյունքում վարկը թանկացավ՝ կազմելով 16 տոկոս: Կրճատվեց նաև վարկի ժամկետայնությունը՝ 15-ից հասնելով 10 տարվա: Նմանատիպ իրավիճակը բնութագրական է բոլոր բանկերին: Ավելին, որոշ բանկեր 2008 և 2009 թվականներին ընդհանրապես դադարեցրեցին հիփոթեքային վարկերի տրամադրումը և վարկավորումը վերսկսեցին միայն 2009 թվականի վերջից՝ այն էլ, որոշակի վերապահումներով: Այդպիսի քաղաքականությունը դրսևորեց նաև «Արշիճինվելեստբանկ» ՓԲԸ-ն: Իհարկե, Հայաստանի բանկային համակարգում տեղի ունեցող այս գործողությունները կրում են միջազգային շուկայի համապատասխան

արձագանքները: Սակայն վարկավորման գործընթացի վրա մեծ ազդեցություն ունի հատկապես ներքին տնտեսական իրավիճակը:

Փորձելով զսպել գնաճային դրսևորումները՝ ՀՀ կենտրոնական բանկը բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը (ներկայումս այն 6.75 տոկոս է կազմում), ինչը բնականաբար, փողի թանկացում է ենթադրում: Այս գործոնի ուղղակի ազդեցությունը դրսևորվում է վարկային ներդրումների տոկոսադրույքների վրա, որոնք առանց այդ էլ կրում են արտաքին հատվածի սպասումները:

Ձևավորված իրավիճակի հետևանքով Հայաստանի բանկային համակարգի վարկային ներդրումների աճի տեմպը 2007 թվականից սկսեց դանդաղել: Թեև բանկերի կողմից տրամադրվող վարկերի ծավալը բացարձակ թվերով շարունակում են ավելանալ, այնուհանդերձ, նկատվում է աճի տեմպերի թուլացում: Իրավիճակը շտկվեց 2011 թվականից սկսած:

Գծագիր 5. ՀՀ բանկային համակարգի վարկային ներդրումների աճի տեմպերի դինամիկան 2006-2013թթ.



Ինչպես երևում է գծագրից, 2008-2009 թվականներին բանկային համակարգի վարկային ներդրումների աճի տեմպը նվազման միտում է դրսևորել: Այս ժամանակաշրջանում ակտիվության անկում է դրսևորվել վարկավորման գրեթե բոլոր ավանդակակն ոլորտներում: Առաջին հերթին դա դրսևորվել է հիփոթեքային և սպառողական վարկավորման ոլորտներում:

Սակայն այս ժամանակահատվածում նշված վարկերի պահանջարկը ամենևին չի նվազել: Ավելին, դրանք վարկային այն շուկաներն են, որտեղ առկա է առաջարկի և պահանջարկի բավական մեծ խզում: Ուստի վարկավորման աճի տեմպերի նվազումը պայմանավորված է հիմնականում բանկերի կողմից ներկայացվող պահանջների խստացմամբ: Իհարկե, դրանց թվում առաջին հերթին պետք է նշել վարկերի թանկացումը և սպասարկման ժամկետների կրճատումը:

Ինչ վերաբերում է բանկային համակարգի կողմից տնտեսությունում իրակացվող վարկային ներդրումներին, ապա դրա դինամիկան 2011-2013 թվականներին ունեցել է հետևյալ տեսքը.

Մոյուսակ 8. ԳՅ բանկային համակարգի կողմից տնտեսություն իրական հատվածում կատարված վարկային ներդրումների դինամիկան

Տնտեսության ճյուղեր	2011թ.		2012թ.		2013թ.	
	ծավալը (մլրդ դրամ)	կշիռն ընդհանուրում %	ծավալը (մլրդ դրամ)	կշիռն ընդհանուրում %	ծավալը (մլրդ դրամ)	կշիռն ընդհանուրում %
Սրբաբերականություն	56.3	13.2	87.2	13.5	146.3	18.8
Գյուղատնտեսություն	22.4	5.2	135.3	21.0	44.2	5.7
Հիմնարարություն	22.0	5.1	39.7	6.1	55.8	7.2
Օտարությունների ոլորտ	37.1	8.7	36.7	5.7	29.0	3.7
Տրանսպորտ և կապ	-	-	12.3	2.0	16.6	2.1
Առևտուր	86.8	20.3	36.8	5.7	141.6	18.2
Սպառողական վարկեր	128.2	30.0	229.3	35.5	182.2	23.4
Ֆիզիոնոմիային վարկեր	53.5	12.5	84.8	13.1	85.1	11.0
Այլ ճյուղեր	20.9	4.9	23.6	3.6	63.4	8.1
Ընդամենը (մլրդ դրամ)	427.2		646.5		778.2	

Այսպիսով, եթե սպառողական ու հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում նվազման միտում է ունեցել նշված ժամանակահատվածում՝ պայմանավորված վարկավորման պայմանների խստացմամբ, ապա կտրուկ աճել է տնտեսության իրական հատվածին տրվող վարկային ներդրումների և ծավալը, և տեսակարար կշիռը: Խոսքը հատկապես արդյունաբերության և շինարարության մասին է:

2013 թվականին բանկային համակարգի կողմից արդյունաբերության ոլորտում իրականացված վարկային ներդրումները 2011 թվականի համեմատ աճել են ավելի քան 2.5 անգամ:

Արդյունաբերական հատվածի վարկավորման ավելացումը պայմանավորված էր բանկային համակարգում տեղի ունեցող գործընթացներով: Ունենալով լրացուցիչ իրացվելիություն՝ բանկերը «ստիպված էին» գտնելու այն տեղաբաշխելու հնարավորություն: Եվ պատահակա չէ, որ այդ նպատակով նրանք սկսեցին անծանր «անհանգստացնել» տնտեսության իրական հատվածում զբաղված գործարարներին՝ առաջարկելով նրանց վարկային միջոցներ:

Այնուամենայնիվ, անկախ նրանից, թե ինչի արդյունքում տեղի ունեցավ արդյունաբերության վարկավորման ավելացում, միանշանակ է, որ դա դրական ձեռքբերում է: Ֆինանսավորումն, անշուշտ, դրական ազդեցություն կունենա արդյունաբերության ոլորտի զարգացման վրա:

Այսպիսով, ներկայիս պայմաններում հանրապետության բանկային համակարգը տնտեսության առողջացմանն աջակցող առաջատար ֆինանսական կառույցն է: Այս պարագայում բանկային համակարգի վարկային ներդրումները կարող են ոչ միայն օժանդակել ճգնաժամի արդյունքում տուժած ոլորտների վերականգնմանը, այլև ապահովել դրանց հետագա զարգացումը: Իհարկե, այս առումով բանկային համակարգի գործունեությունը դառնում է առավել ռիսկային: Դա վերաբերում է առաջին հերթին վարկային, տոկոսադրույքների փոփոխության, ոչ հաշվեկշռված իրացվելիության և գնաճային ռիսկերին:

Դա է պատճառը, որ ներկայումս բանկերը խստացրել են հաճախորդների վարկունակության գնահատման մեթոդները, վարկեր տրամադրելիս օգտվում են վարկային ռեզիստի և մասնավոր վարկային բյուրոների համապատասխան գնահատումներից:

Այս առումով ԳՅ բանկերն, ինչպես արդեն նշվել է, պարտավոր են իրականացնել վարկային ներդրումների պորտֆելի դիվերսիֆիկացիա և սահմանել որոշակի սահմանափակումներ՝ նույն տեսակի ապահովվածություն ունեցող վարկերի տրամադրման գծով:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ՀՀ բանկային համակարգում առկա է գերիրացվելիության խնդիր: Այդ մասին են վկայում բանկերի հիմնական նորմատիվային ցուցանիշները:

Այսպես, ՀՀ բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվը (ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերությունը) 2013 թ. կազմել է 28.43 %՝ ավելի քան 2 անգամ գերազանցելով սահմանված նվազագույն 12 %-ի մակարդակը: Ընդհանուր իրացվելիությունը (բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերությունը) նույն ժամանակահատվածում կազմել է 34.44 %՝ թույլատրված նվազագույն 15 %-ի պայմաններում: Ընթացիկ իրացվելիությունը (բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերությունը) կազմել է 140.82 %, ինչը ավելի քան 2 անգամ գերազանցում է նվազագույն թույլատրելի մակարդակը՝ 60%-ը⁸:

Տվյալ պարագայում կարելի է ասել, որ ՀՀ բանկերը ծառայում են ավելի շատ ավանդատուներին, քան վարկառուներին:

Մյուս կողմից պետք է նշել, որ բարձր ռիսկը երկարաժամկետ հատվածում կարող է դրսևորվել ոչ միայն ակտիվների կորստով, այլև բարձր եկամուտների ստացմամբ: Ակնհայտ է, որ մեծ եկամտաբերություն ունեցող գործարքները ուղեկցվում են բարձր ռիսկով:

Այս պարագայում, անդրադառնալով ՀՀ բանկային համակարգի ներդրումային գործունեության խթանման ուղիներին՝ նշվում է, որ վերջիններս արտացոլվում են տնտեսության ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում վարկային ներդրումների ավելացման գաղափարում:

Բանկերի ներդրումային գործունեությունը պետք է ակտիվացնել հատկապես շինարարության ոլորտում: Այս ոլորտում ներդրումային միջոցների սառեցումը բացասաբար է անդրադառնում ոլորտի հետագա զարգացման վրա:

Այս առումով առաջարկվում է մեծացնել վարկային ներդրումների հոսքը դեպի շինարարություն: Ընդ որում, համեմատած այլ մյուլդերի հետ, շինարարությունում ներդրումների հետ կապված ռիսկերը համեմատաբար ցածր են, քանի որ ոլորտը գրավիչ է ոչ միայն հայրենական, այլև օտարերկրյա ներդրողների համար:

Ինչ վերաբերում է արդյունաբերությունում բանկային ներդրումներին, ապա այս ոլորտը ամենառիսկայինն է, հատկապես՝ լեռնահանքային արդյունաբերությունը, քանի որ կապված է միջազգային շուկայում գնային թռիչքածև տատանումների հետ: Ուստի այս ոլորտում վարկային ներդրումների իրականացման ժամանակ բանկերը ստիպված կլինեն «վտանգի տակ դնել» իրենց դրական իրացվելիությունը: Այսինքն, այս ոլորտում արդյունավետ ներդրումային գործունեություն կարող են ծավալել միայն մեծ ռեսուրսային բազա ունեցող բանկերը: Այդպիսիք մեր բանկային համակարգում համարվում են արտասահմանյան կապիտալի ներգրավվածությամբ բանկերը:

Այս առումով նշենք, որ «ՎՏԲ Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից արդեն արվել են առաջին քայլերը՝ ոլորտի անկումը կասեցնելու ուղղությամբ: Այսպես, 2008 թվականին Թեղուտի շահագործման ծրագրի համար վերոհիշյալ բանկի հետ կնքվել է ավելի քան 270 մլն ԱՄՆ դոլարի վարկային ներդրումների պայմանագիր:

Այսպիսով, արդյունաբերության ոլորտում վարկային ներդրումների գծով մեծ ներուժ ունեն օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ բանկերը՝ «HSBC Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն, «Առեքսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ն, «Ակբա Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ-ն:

ՀՀ բանկային համակարգի ներդրումային գործունեությունն ամիրաժետ է ակտիվացնել նաև փոքր և միջին ձեռնարկատիրության, սննդարդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում, որոնցում համեմատաբար ցածր են ռիսկային գործոնները:

⁸ <http://www.finnport.am>

Այսպիսով, ՀՀ առևտրային բանկերի ներդրումային գործունեության խթանման նպատակով առաջարկվում են որոշակի միջոցառումներ:

Մասնավորապես՝ առաջարկվում է տնտեսության ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտները բանկային համակարգի վարկային և ներդրումային քաղաքականության իրականացման գերակա ոլորտներ համարել ու ներդրումային ռեսուրսներն ուղղել այս ոլորտներ:

Հաշվի առնելով այս ոլորտների ռազմավարական նշանակությունը երկրի տնտեսության զարգացման գործում՝ առաջարկվում է նրանցում առևտրային բանկերի ներդրումային ակտիվության բարձրացման նպատակով պետական կարգավորման լծակների գործադրում: Մասնավորապես՝ հիմնավորվում է պետական մակարդակով երաշխիքային հիմնադրամների ստեղծումը, որոնք լրացուցիչ երաշխիքներ կտրամադրեն տնտեսության իրական հատվածում գործող ձեռնարկություններին վարկավորող բանկերին:

Հայաստանյան բանկերի ներդրումային գործունեության մյուս կարևոր ուղղությունը ներդրումային արժեթղթերում գործառնությունների իրականացումն է: Այս առումով նպատակահարմար է իրականացնել բանկերի ներդրումային գործիքների որակի գնահատման տեխնիկական վերլուծություն և դրա հիման վրա առաջարկել այս ոլորտում բանկերի ներդրումային գործունեության խթանման ուղղությունները:

ՀՀ բանկերի կողմից պետական արժեթղթերում ներդրումների իրականացման ակտիվության մասին է վկայում այս արժեթղթերում ներդրողների կառուցվածքի վերլուծությունը.

Աղյուսակ 9. ՀՀ պետական պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը⁹
(սյն դրամ)

Ներդրողներ	2013թ. դեկտեմբեր	2014թ. հունվար
Ռեզիդենտներ, այդ թվում՝	181.106	182.099
ՀՀ բանկեր	74.450	96.027
Ոչ բանկ գործակալներ և դիլերներ	633.0	786.0
Ոչ բանկ ներդրողներ	7.561	8.629
ՀՀ կենտրոնական բանկ	57.849	35.105
ՀՀ ֆինանսների նախարարություն	40.552	41.552
Ոչ ռեզիդենտներ	27.0	27.0
Ընդամենը	181.133	182.126

Առենախտության «եզրակացություններ» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և կարևոր եզրահանգումները:

ՀՀ բանկային համակարգի ներդրումային գործունեության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ներկայումս ՀՀ բանկային համակարգը երկրի ներդրումային շուկայում ֆինանսական ռեսուրսների մատակարար հանդիսացող կարևոր ֆինանսական կառույց է, որը մեծ ղեկավարում ունի բնակչության խնայողությունները հավաքագրելու, դրանք ներդրումային ռեսուրսների վերածելու և տնտեսության տարբեր ոլորտներում ներդրումներ իրականացնելու գործընթացում:

ՀՀ առևտրային բանկերի ներդրումային գործունեության մեջ վարկային ներդրումների պորտֆելը գերակշիռ դիրք է զբաղեցնում ներդրումային արժեթղթերի պորտֆելի նկատմամբ: Դա պայմանավորված է հանրապետությունում ներդրումային արժեթղթերի շուկայի զարգացման մեկնարկային փուլի առանձնահատկություններով, ինչը պայմանավորում է երկրի արժեթղթերի շուկայի բանկային սնողելի վերածման գործընթացը:

Այսպիսով, ի տարբերություն զարգացած երկրների, որտեղ ներդրումային գործունեության մեջ ներառված են հիմնականում ֆոնդային բորսայի անդամները, Հայաստանում ներդրումները ֆինանսավորվում են հիմնականում բանկային ռեսուրսների հաշվին:

Այլ է պատճառը, որ ներկայումս մեծ կարևորություն են ստացել ՀՀ բանկերի ռեսուրսային բազայի ընդլայնման խնդիրները, քանի որ մեծ ռեսուրսային բազայով

⁹ Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի 2014թ վերլուծություններ: www.cba.am: Ընդ որում՝ Տվյալները ներկայացված են անվանական արժեքով ամսվա վերջի դրությամբ և ներառում են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված անտեսական պարտատոմսերը:

բանկերն են հնարավորություն ստանում մեծածավալ ներդրումներ իրականացնել տնտեսության իրական հատվածում:

Այս առումով, առաջնային պլան են մղվել 33 առևտրային բանկերի գործառնությունները կորպորատիվ արժեթղթերի շուկայում:

Այսպիսով, հաշվի առնելով բանկի ներգրաված միջոցների մեծ նշանակությունը բանկի ներդրումային ակտիվության բարձրացման գործում և պարտատուների՝ որպես ավանդի այլընտրանքի կարևոր դերը, առաջարկվել են վերոհիշյալ խնդիրների լուծման հետևյալ տարբերակները.

1) տեղեկացվածության հարցի լուծում գովազդի և հասարակության հետ հաղորդակցման այլ միջոցների օգտությամբ

2) բանկերի կողմից իրականացվող կորպորատիվ պարտատուների թողարկում լրացուցիչ արտոնություններով: Օրինակ՝ տվյալ պարտատուները տիրապետողին կարող է տրամադրվել պարտատուի գումարից մի քանի անգամ ավել գումարի վարկավորման հնարավորություն: ավելի ցածր տոկոսադրույթով: Այդ դեպքում պարտատուի ժամկետը պետք է լինի ավելի երկար, քան վարկինը և այլն: Սա թույլ կտա ոչ միայն լուծել միջոցների ներգրավման, այլև արդյունավետ տեղաբաշխման խնդիրները:

Այս առումով, հնարավորություն կստեղծվի բարելավել նաև բանկերի ներդրումային պորտֆելի կառուցվածքը՝ նրանում առավելապես ընդգրկելով ֆոնդային շուկայի գործիքներ:

Ինչ վերաբերում է 33 առևտրային բանկերի ներդրումային արժեթղթերի պորտֆելում բաժնային արժեթղթերի տեսակարար կշիռ ընդլայնմանը, ապա այս առումով կանոր տեղաշարժեր կարող են զրանցվել 33 բանկային համակարգում Բազել 3-ի կորպորատիվ կառավարման հայեցակարգային մոտեցումների ներդրման արդյունքում:

33 առևտրային բանկերի ներդրումային պորտֆելի կառուցվածքի բարելավման վերաբերյալ հաջորդ առաջարկությունը վերաբերում է պորտֆելի կազմում դրամական շուկայի գործիքների ներառմանը: Խոսքը հատկապես մուրհակների և ավանդային հավաստագրերի մասին է, որոնք բանկերի համար կարող են հանդիսանալ կարճաժամկետ ներդրումային գործիքներ և անհրաժեշտության դեպքում լուծել բանկերի կարճաժամկետ իրացվելիության խնդիրները:

Կարելի է առաջարկել այս գործիքները կիրառել որպես գրավ՝ դրանց ձեռք բերողներին ոչ ռիսկային վարկերի տրամադրման ժամանակ, ինչը կարող է լուծել նաև բանկերի կարճաժամկետ վարկավորման խնդիրները:

Վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ ներկայումս հանրապետության բանկային համակարգի ներդրումային պորտֆելում զերակշռում են պետական արժեթղթերը՝ շնորհիվ իրենց ցածր ռիսկայնության և բարձր իրացվելիության:

Սա, իհարկե, դրական երևույթ է երկու տեսանկյունից: Նախ բանկերը հնարավորություն են ստանում ներդրումային գործունեությունը զուգակցել ռիսկայնության ցածր մակարդակով և ստանալ կայուն եկամուտներ, ինչն էլ պայմանավորում է բանկերի ներդրումային պորտֆելի հաշվեկշռված ռիսկայնության և ոչ բարձր եկամտաբերության մակարդակը: Եվ երկրորդ բանկային ռեսուրսները ծառայում են նաև որպես պետական կարիքների բավարարման և բյուջեի ղեֆիցիտի ծածկման համար ֆինանսական ռեսուրսներ:

Ինչ վերաբերում է 33 առևտրային բանկերի վարկային ներդրումների պորտֆելին, ապա վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ վերջինս աճման միտում ունի՝ թեև աճի տեմպերը, պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով, վերջին երեք տարիներին ցածր են եղել:

Այնուամենայնիվ, կարևորելով վերջիններիս դերը երկրի տնտեսության զարգացման գործում, կարելի է առաջարկել այս ուղղությամբ կատարվող միջոցառումների նկատմամբ պետական լծակներ գործադրել:

Ֆինանսատնտեսական ճգնաժամը ցույց տվեց, որ ազատ շուկայական հասարակարգը ինքնին, առանց պետության միջամտության, կարող է ունենալ լուրջ ճգնաժամային խնդիրներ:

Այս առումով, առաջարկվում է պետական մակարդակով երաշխիքային հիմնադրամներ ստեղծել, որոնք լրացուցիչ երաշխիքներ կտրամադրեն տնտեսության իրական հատվածում գործող ձեռնարկություններին վարկավորող բանկերին: Դա էապես կբարձրացնի 33 առևտրային բանկերի ներդրումային ակտիվությունը և առավելապես կնվազեցնի ռիսկայնության մակարդակը հատկապես իրական հատվածում վարկային ներդրումների ուղղությամբ:

Վարկային ներդրումներ իրականացնելու համար համապատասխան ռեսուրսային բազայի սահմանափակության պայմաններում կարելի է առաջարկել նաև վարկավորման նոր տեսակներ կիրառել, մասնավորապես՝ հավաքական

վարկեր: Դա ոչ միայն հնարավորություն կտա լուծելու վերոհիշյալ խնդիրները, այլ նաև կնպաստի միջբանկային համագործակցության ընդլայնմանը:

Ինչ վերաբերում է ՀՀ առևտրային բանկերի ներդրումային գործունեության առնչվող ռիսկերին, ապա դրանք նվազեցնելու նպատակով առաջարկվել է բանկերի կողմից մատուցվող ներդրումային ծառայությունները բաժանել երկու հիմնական խմբերի՝ ռիսկային (դիվերսիային գործունեություն, տեղաբաշխման ծառայություններ և այլն) և ոչ ռիսկային (բրոքերային գործունեություն, ներդրումներ պետական պարտատոմսերում և այլն) ներդրումային ծառայությունների: Այս դասակարգման հիման վրա բանկերը հնարավորություն կունենան ներդրումային ծառայությունների մատուցման և ներդրումների իրականացման ժամանակ ճիշտ գնահատել գործունեության ռիսկայնության մակարդակը և անհրաժեշտության դեպքում համապատասխան պահուստներ ձևավորել:

Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Գաբրիելյան Գ. «ՀՀ առևտրային բանկերի ներդրումային գործունեության առանձնահատկությունները արդի փուլում»: // Երևանի «Գլաժոր» համալսարանի «Գլաժոր-20» հոդվածների հրապարակման ժողովածու: Երևան, Նոյան Տապան, 2011թ., էջ 330-341:
2. Գաբրիելյան Գ. «ՀՀ առևտրային բանկերի ներդրումային պորտֆելի ձևավորման ռազմավարությունը»: // Երևանի «Գլաժոր» համալսարանի «Գլաժոր-20» հոդվածների հրապարակման ժողովածու: Երևան, Նոյան Տապան, 2011թ., էջ 353-363:
3. Գաբրիելյան Գ. «Ներդրումային պորտֆելի կառավարման արդյունավետության բարձրացման արդի գերակայությունները ՀՀ առևտրային բանկերում»: // Հայաստան: Ֆինանսներ և էկոնոմիկա: Երևան, #8 (146), 2012թ.- էջ 14-17:

Современные тенденции образования и совершенствование управления инвестиционного портфеля в банковской системе РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – “Финансы, бухгалтерский учет”.

Защита диссертации состоится 18-ого декабря 2014 г. в 14⁰⁰ на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

Р Е З Ю М Е

Диссертация посвящена современным приоритетам и перспективам развития управления инвестиционного портфеля в банковской системе РА

Инвестиционный портфель банка - это совокупность совершенных банком инвестиций с целью получения прибыли и диверсификации рисков зависимости от поведения инвесторов инвестиционный портфель быть следующих типов:

- агрессивный (рисковый) - нацелен преимущественно на получение дохода от прироста курсовой стоимости ценных бумаг (в основном, акций), которые входят в портфель ценных бумаг Владелец такого портфеля подвержен высокому уровню риска Такой инвестор стремится к наибольшей доходности и вкладывает капитал в рискованные бумаги;

- умеренный (рыночный) - доход будет состоять за счет прироста курсовой стоимости, процентов по доходным государственным ценным облигациями, а также с дивидендных выплат Инвесторы с умеренной стратегией как в основной приоритет выбирают величину дохода, не ограничивая жесткими рамками периода инвестирования;

- консервативный портфель формируется из государственных облигаций Инвестор подвержен меньшей степени риска Инвестор, придерживается консервативной стратегии управления портфелем, заинтересован в получении стабильного дохода в течение длительного периода времени Поэтому для него предпочтительным является непрерывный поток платежей в виде процентных выплат на ценные бумаги Его удовлетворяет меньшая доходность, которая компенсируется высокой надежностью получения доходов.

В концепции формирования инвестиционного портфеля банка для отражения следующие основные моменты:

1. Определение основной цели инвестиционной деятельности и необходимости целесообразности портфельных инвестиций

2. Определение сроков приобретения и хранения ценных бумаг в портфеле На этом этапе инвестор определяет свой инвестиционный горизонт, т.е. промежуток времени, на который распространяется его стратегия и по которому оцениваются результаты инвестиционного процесса.

3. Определение видов ценных бумаг, из которых планируется сформировать портфель и критерии как отбор финансовых инструментов На этом этапе инвестор анализирует информацию на фондовом рынке, оценивает экономическую конъюнктуру и прогнозы на будущее Этот этап можно назвать инвестиционным анализом, ибо его цель - в предварительном отборе инвестиционных активов, которые инвестор считает целесообразными.

4. Определение структуры инвестиционного портфеля и его составных частей Здесь определяются инвестиционные лимиты, неиспользуемые для эффективных инвестиций в сегменты финансового рынка

5. Определение классификации и принципов создания инвестиционного портфеля (агрессивный, умеренный, консервативный) Здесь описано соотношение дивидендной и курсовой доходности ценных бумаг, форм выдерживают портфель.

6. Диверсификация составных частей портфеля Определение принципов диверсификации и количественных характеристик

7. Формирование механизмов страхования риска Особенности работы производными ценными бумагами

8. Схемы управления инвестиционным портфелем

9. Оценка доходности, риска и ликвидности инвестиционного портфеля, который проектируется

10 Налогового планирование, оптимизация налогообложения операций с ценными бумагами и доходов от инвестиционной деятельности

11 Юридических вопросов

12 Конечная оптимизация структуры инвестиционного портфеля по установленным критериям доходности, риска и ликвидности

Инвестиционный портфель комбанков Армении в первом квартале 2013 года сравнительно с показателем на начало года вырос на 7,3%, до 153,8 млрд. драмов.

Согласно промежуточным финансовым отчетам банков, за первый квартал 2013 года наибольшая доля вложений в 77,2% пришлось на инвестиции, предусмотренные для продажи – более 118,7 млрд. драмов.

При этом финансовые инвестиции в коммерческих целях составили около 12,9 млрд. драмов или 7,4% от всех инвестиций. Однако инвестиции банков, хранящиеся до истечения срока погашения, в отчетном периоде составили 14,2% от всех инвестиций – более 21,9 млрд. драмов.

По данным отчетов банков удельный вес инвестиций в уставном капитале контролируемых лиц в первом квартале составил 0,2% или же 324 млн. драмов.

Лидером в банковской системе по объему портфеля инвестиций за отчетный период является HSBC Банк Армения с инвестиционным портфелем в 26,5 млрд. драмов, далее следует Арmbизнесбанк – 16,8 млрд. драмов и Армсвисбанк – 15,8 млрд. драмов.

Проведенный анализ опубликованных материалов, посвященных проблемам портфельных инвестиций, свидетельствует о том, что в большинстве работ рассматриваются общие подходы к вопросу портфельных инвестиций, что не полностью раскрывает проблему формирования и управления инвестиционным портфелем применительно к коммерческим банкам, а именно:

методологии создания портфеля не предусматривают учета особенностей производственно-хозяйственной деятельности инвестора (хозяйствующего субъекта), в нашем случае – банка;

- недостаточно раскрыты вопросы информационной поддержки управления инвестициями с использованием глобальных информационных сетей;

между одинаковыми или близкими понятиями существуют значительные различия в терминологии;

многие публикации являются проблемно-рекламными, т.е. направлены на привлечение потенциальных клиентов, а для достижения этой цели дается простое указание максимально возможной доходности за прошедший период без проведения подробного анализа всех составляющих доходности, риска и ликвидности. Целью диссертационного исследования является построение системы математических моделей формирования и управления инвестиционным портфелем банка и информационной поддержки принятия решений в процессе моделирования.

Достижение поставленной цели требует решения ряда взаимосвязанных задач, к числу которых относятся следующие:

1. Анализ предметной области и обоснование состава задач совершенствования экономико-организационного, математического и информационного обеспечения моделирования инвестиционного портфеля банка;

2. Постановка многокритериальной задачи и выбор стратегии формирования портфеля;

3. Разработка диалоговой иерархической модели выработки решений по управлению инвестиционным портфелем с учетом особенностей коммерческих банков и ориентацией на их потребности;

Методологической и теоретической основой диссертации послужили труды отечественных и зарубежных экономистов, математиков-финансистов и работников банковской сферы. В работе использованы материалы Центрального банка Республики Армения, а также крупнейших армянских коммерческих банков ("Армфининвестбанк", "Америя банк", "АКБА Кредит Агриколь", "ВТБ-Армения"), конференций и семинаров банковских работников. В качестве метода исследования применены математические методы оптимизации, методы теории принятия решений, элементы теории риска, статистические методы и имитационное моделирование.

Modern Tendencies of Formation and Development of Management Investment Portfolio in Banking System of RA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.03 - „Finances, Accounting,,

The defense of the thesis will take place on December 18, 2014 at 14⁰⁰ o'clock at 014 Council of Economics at Armenian State University of Economics: 128 M. Nalbandyan str., Yerevan 0025, RA.

ABSTRACT

The dissertation is devoted to modern priorities and prospects of development of management of an investment portfolio in banking system of RA

The investment portfolio of bank is a set of the investments made by bank for the purpose of reception of profit and diversification risks

Dependences on behavior of investors the investment portfolio can be following types:

- Aggressive (brave) - it is aimed mainly at reception of the income of a gain of course cost of securities (basically, actions) which enter into a portfolio of securities the Owner of such portfolio it is subject of high degree risk. Such investor aspires the greatest profitableness and invests the capital in high level securities;

- Moderate (market) - the income will consist at the expense of a gain of course cost, percent on profitable the state valuable bonds, and also with dividend payments Investors with moderate strategy as in the basic priority choose income size, not being limited to rigid frameworks of the period of investment;

The conservative portfolio is formed of the state bonds the Investor is subject to smaller degree of risk, adheres to conservative strategy of management by a portfolio, is interested in reception stable the income during the long period of time Therefore for it preferable the continuous stream of payments in the form of percentage payments on. Its securities is satisfies less profitableness which is compensated high it is necessary receptions of incomes.

In the concept of formation of an investment portfolio of bank find reflex ion following basic moments:

1 Definition of a main objective of an investment policy, necessity and expediency of portfolio investments

2 Definition of terms of acquisition and storage of securities in a portfolio At this stage the investor defines the investment horizon, i.e. a time interval on which its strategy extends and on which results investment process are estimated.

3 Definition of kinds of securities from which it is planned to generate a portfolio and criteria: as selection of financial tools At this stage the investor analyzes the information in the share market, estimates economic on a conjuncture and forecasts for the future This stage it is possible to name the investment analysis, for its purpose - in preliminary selection of investment actives as which the investor considers more profitable.

4 Definition of structure of an investment portfolio and Its components the investment limits used for effective investments into segments of the financial market Here are defined

5 Definition of classification and principles of creation of an investment portfolio (aggressive, moderated, conservative) Here is described a parity of dividend and course profitableness of securities, forms maintain of portfolio.

6 Diversification of components of a portfolio Definition of principles diversification and quantitative characteristics

7 Formation of mechanisms of insurance upon risk of Feature of work with derivative securities

8 Schemes of management of an investment portfolio

9 Estimation of profitableness, risk and liquidity of an investment portfolio which is projected

10 Tax planning, optimization of the taxation of operations with securities and incomes of investment activity

11 legal question

12 Final optimization of structure of an investment portfolio by the established criteria of profitableness, risk and liquidity

The investment portfolio of commercial banks of Armenia in the first quarter 2013 in comparison with an indicator on the beginning of year has grown on 7,3 %, to 153,8 billion драмов.

According to intermediate financial reports of banks, for the first quarter 2013 the greatest share of investments in 77,2 % has fallen to the investments provided for sale - more than 118,7 billion драмов.

Thus financial investments into commercial objectives have made about 12,9 billion драмов or 7,4 % from all investments. However the investments of banks stored before the expiry of the term of repayment, in the accounting period have made 14,2 % from all investments - more than 21,9 billion drams.

According to reports of banks relative density of investments in the authorized capital of controllable persons in the first quarter has made 0,2 % or 324 million drams.

The leader in bank system on volume of a portfolio of investments for the accounting period is HSBC Bank Armenia with an investment portfolio in 26,5 billion драмов, further follows Armbusinessbank - 16,8 billion драмов and Armsvisbank - 15,8 billion драмов.

The carried out analysis of the published materials devoted to problems portfolio of investments, testifies that in the majority of works the general approaches to a question of portfolio investments are considered that not completely opens a formation and management problem an investment portfolio of commercial banks, namely:

- Methodology of creation of a portfolio do not provide the account of features it is industrial-economic activities the investor (the managing subject), in our case - bank;

- Questions of information support of management by investments with use of global information networks are insufficiently opened;

- Between identical or close concepts there are considerable distinctions in terminology;

Many publications are problem-advertising, i.e. are directed on attraction of potential clients, and for achievement of this purpose the simple instructions of the greatest possible profitableness for the last period without carrying out of the detailed analysis of all components of profitableness, risk and liquidity are given. The purpose of dissertational research is construction of system of mathematical models of formation and management of an investment portfolio of bank and information support of decision-making in the course of modeling.

Achievement of an object in view demands the decision of some the interconnected problems which number the following concerns:

1. The analysis of a subject domain and a substantiation of structure of problems of perfection economical-organizational, mathematical and a supply with information of modeling of an investment portfolio of bank;
2. Statement high criteria problems and a choice of strategy of formation of a portfolio;
3. Working out of dialogue hierarchical model of development of decisions on management of an investment portfolio taking into account features of commercial banks and orientation to their requirements;

As methodological and theoretical basis of the dissertation works of domestic and foreign economists, mathematicians-financiers and workers of bank sphere have served. In work materials of the Central bank of Republic of Armenia, and also the largest Armenian commercial banks ("Ardshinvestbank", "Ameriabank", "ACBA Credit Agricol", "VtB-Armenia"), conferences and seminars of bank workers are used. As a research method mathematical methods of optimization, methods of the theory of decision-making, elements of the theory of risk, statistical methods and imitating modeling are applied.

